նոցա հրովարտակ սակս նորոգելոյ զերկու ամբարանոցս ցորենոյ՝ և երկու սենեակ 'ի բնակութիւն ուխտաւորաց նոցին. ապա պատուիրէ՝ զի առանց Կայսերական հրամանի չթողուլ երբէք լինիլ ձեռնամուխ յայնպիսի իրս, կամ նորոգել զԳերեզմանն և զայլ տեղիս, ոչ հրամանաւ կուսակալին և ոչ գրով դատաւորին, և իւրաքանչիւր ազգաց բնակիլ խաղաղութեամբ 'ի սեփհական տեղիս իւրեանց. որպէս յայտ առնէ հրովարտակն տուեալ 'ի թուին ՌՃԾ (1739) 'ի վեցին Ցունաց ընդ Հայոց։ Արդ՝ Հայք, Ցոյնք եւ Լատինք՝ խաղաղութեամբ բնակեսցին 'ի սեփհական տեղիս իւրեանց՝ առանց կռուոյ եւ հակառակութեան, ՌՃԾ (1742)։

ԳԼՈՒԽ Ը.

Կտակ Գրիգորի Պատրիարքի։ Գիւղականք Բեթղեհէմի։ Նորոգութիւն Ս. Հրեշտակապետի։ Մահ Գրիգորի։ Ընտրութիւն Յակոբ Պատրիարքի Նալեան։ Եպրուպ աղա։ Անլաղկիք Սիոնի։

ԳՐԻԳՈՐ Պատրիարք Շղթայակիր հասեալ յամս ծերութեան՝ զգածեալ տկարութեամբ անձին, և զմտաւ ածեալ զմահն հասարակաց՝ կամեցաւ ինքն 'ի կենդանութեան իւրում որոշել զյաջորդ Պատրիարքութեան իւրոյ. զի մի ասէ զկնի մահուան իմոյ բազմեցուսցեն յԱթոռն զանհմուտ եւ զանիմաստ ոք, յեղծումն եւ յապականութիւն այնքան բազմավաստակ ջանից և աշխատութեանց իւրոց. նմին իրի ինքնին ձեռամբ իւրով գրեաց կտակագիր, և առաքեաց զայն 'ի Կոստանդինուպոլիս 'ի ձեռն աշակերտին իւրոյ Թէոդորոսի Եպիսկոպոսի Խորենացւոյ 'ի Տարոնոյ. յորում բազմօք թախանձէր առ քահանայս եւ Իշխանաւորս ազգին, զի 'ի կենդանութեան իւրում հաստատեսցեն յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի զնոյն ինքն զԹէոդորոս, և փութանակի դարձուսցեն զնա յետս 'ի Ս. Աթոռն. զի եթէ ոչ հաճեսցի ազգն 'ի խորհուրդ իւր, մի հանցեն զայն 'ի հրապարակ՝ չ'լինիլ